ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Խաչատրյան Լ. Ա. (ՀՀ Ոստիկանության ԲՎ պոլիկլինիկա, Երևան, Հայաստան)

khachatryanlamira@gmail.com

Ներկայացման ամս. 27.03.2021

Գրախոսման ամս. 07.04.2021

Տպագրության ընդունման ամս. 16.04.2021

Մեր կողմից ստորև ներկայացված հոդվածը նվիրված է քրեական մշակույթի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը: Խոսելով քրեական մշակույթի մասին, պետք է ասել, որ դրա ձևավորման համար եղել են պատմականորեն, մշակութաբանորեն, հասարակագիտորեն, սոցիալական դրսևորումներով, ինչպես նաև իրավական տեսակետից պայմաններ, որոնք, նաև պետական կառուցվածքի և պետության գործունեության կամ անգործունեության արդյունքում նպաստել են, որ այդ մշակույթը գոյատևի և տարիների ընթացքում դառնա նաև հասարակական կյանքի մաս: Անձի վրա ազդեցություն թողնելու տեսակետից, իհարկե, այն առավել շուտ և արագ յուրացվում է հատկապես անչափահասների կողմից, վերջիններիս տարիքային առանձնահատկությունների շնորհիվ: Հեռուստատեսությամբ ցուցադրվող ագրեսիան, բռնությունը, քրեական որոշակի վարքային դրսևորումներ ցուցաբերող անձանց հաջողությունները և սին ռոմանտիկ կերպարներ քարոզող պատմությունները, անչափահասների կողմից ընկալվում են որպես դրական, իսկ համացանցում դրանց անսահման հասանելիությունը հանգեցնում է նրան, որ անչափահասները ստանում են մեծ քանակությամբ տեղեկատվություն քրեական մշակույթի առանձնահատկությունների և տարրերի մասին: Հոդվածում կատարվել է տեսական վերլուծություն քրեական մշակույթի վերաբերյալ՝ հոգեբանական ազդեցության տեսանկյունից: Ներկայացվում են նաև իրականացված հետազոտության արդյունքները, մի հետազոտություն, որը նպատակ ուներ ուսումնասիրել քրեական մշակույթի բացասական ազդեցությունն անչափահասների վրա: Հետազոտության արդյունքները թույլ են տալիս մեզ եզրակացնելու, որ կա միտում անչափահասների մոտ, իրենց միջանձնային հարաբերություններում կիրառել քրեական ենթամշակույթի որոշ արժեքներ և նորմեր՝ որպես վարքի ձև, որպես հարաբերությունները կարգավորող միջոց: Հատկապես, խոսքը արական սեռի մոտ

ընկերական հարաբերությունների, ինչպես նաև՝ հակառակ սեռի հետ հարաբերություններ կառուցելու մասին է:

DOI: *https://doi.org/10.46991/SBMP/2021.4.1.059*

Հանգուցային բառեր՝ *քրեական մշակույթ, անչափահասներ, հակահիրավական վարք, հանցագործ համայնք, քրեական փարրեր, իրավագիտակցություն:*

Քրեական միջավայրի կարևորագույն բնութագրիչ է կազմում մշակույթը: Լատիներենից թարգմանաբար «սուբկուլտուրա» նշանակում է հիմնական մշակույթի մաս: Ըստ Օքսֆորդյան հոգեբանության բառարանի, համարվում է, որ ենթամշակույթը արտացոլում է մեծ հասարակության գերակշռող մշակութային մոդելները, և դրա հետ մեկտեղ ունի հատուկ, տարբերվող նորմեր, արժեքներ և սովորույթներ[6]: Երբ խոսում ենք քրեական ենթամշակույթի մասին, նկատի ունենք քրեական ավանդույթները և սովորույթները, դաջվածքները և ժարգոնը, վարքի ոչ ֆորմալ նորմերը և ժամանցը: Այսինքն կարելի է ենթադրել, որ այն առանձնանում է նաև վարքի կարգավորման սեփական սկզբունքներով, նորմերով, միջանձնային հարաբերությունների կառավարմամբ, որը ենթադրաբար կառուցվում է արհեստական ստեղծված և շատ հաճախ մանիպուլյատիվ սկզբունքների վրա, մինչդեռ մարդկությունն իր զարգացմամբ հասել է հարաբերությունների կարգավորմանը՝ հիմնված յուրաքանչյուրի անհատական իրավունքների և ազատությունների պաշտպանության և հարգանքի սկզբունքի վրա:

Քրեական ենթամշակույթը և դրա տարրերի դրսևորվումները կարելի է հանդիպել ոչ միայն հանցավոր խմբավորումների անդամների մոտ, քրեակատարողական հիմնարկներում, այլ նաև տարբեր սոցիալական խմբերում (օրինակ՝ մասնագիտա-տեխնիկական ուսումնարաններում կամ նույնիսկ ընդհանուր կրթական դպրոցներում, ավագ դպրոցներում որտեղ կան «հեղինակություններ» և «վտարվածներ», բանակում կամ ռազմական ուսումնարանում, որտեղ տարածված է «դեդովշինան»՝ ծառայության տարբեր փորձով զինծառայողների միջև ոչ կանոնադրական հարաբերություններ, որոնք ենթադրում են ծաղրանք, բռնություն, ռազմական հագուստի տարաձև կրում և այլն) [9, 87 էջ]:

Քրեական ենթամշակույթը հասկացվում է որպես «հոգևոր» և նյութական արժեքների ամբողջություն, որը կարգավորում և կանոնակարգում է հանցավոր համայնքների կյանքը և հանցավոր գործունեությունը, ինչը նպաստում է դրանց կենսունակությանը, համախմբվածությանը, հանցավոր գործունեությանը և շարժունակությանը, հանցագործների սերունդների շարունակականությանը: Քրեական ենթամշակույթի հիմքը ձևավորվում է իրավական հասարակության համար խորթ արժեքներով, նորմերով, ավանդույթներով, զանազան ծեսերով, որոնք իրենց տեղն են գտել երիտասարդ հանցագործների խմբավորումների մեջ: Դրա սոցիալական վնասը կայանում է նրանում,

որ այն խթանում է տարիքային ընդդիմության գերաճը հանցավորի, ինչի պատճառով էլ համարվում է երիտասարդության շրջանում հանցագործության «վերարտադրման» մեխանիզմ [5, 110 էջ]: Այսինքն, կարող ենք ենթադրել, որ քրեական ենթամշակույթը խեղաթյուրելով իրավական հասարակության շրջանում ընդունված արժեքները, կարող է առաջ քաշել սեփական արժեհամակարգը, ինչը իր տեղը գտնելով երիտասարդ հանցագործների խմբավորումների մեջ ենթադրում է միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններ, որոնք էլ իրենց հերթին կարող են ազդել քաղաքացիական հասարակության անդամների հետ միջանձնային հարաբերությունների վրա:

Հանցագործ համայնքը (կազմակերպությունը) առավել կայուն, կազմակերպված, հիերարխիկ գոյացություն է, որի համար տիպիկ է համարվում նյութական և ֆինանսական հիմքի առկայությունը (ընդհանուր գումարային պահոցներ, սեփական առևտրական կառույցներ և այլն), ղեկավարման կոլեգիալ ձևը, որի ժամանակ կազմակերպության ղեկավարումը իրականացվում է մարդկանց խմբով, ովքեր անձնապես ղեկավարում են համայնքի տարբեր ճյուղերը: Այստեղ են մտնում նաև վարքի ոչ ֆորմալ նորմերը, սովորույթները, դրանց խախտման համար պատիժները, սեփական լեզվամտածողությունը, որը վերածվել է ժարգոնի և այլն [1, 136 էջ]:

Քրեական մշակույթում կարևոր տեղ են զբաղեցնում նաև առասպելները (քրեական միֆոլոգիա), որոնցում արտահայտվում են «հաջողակ գողի», «համարձակ ավազակի», «չկոտրվող տղայի» կերպարները, ինչպես նաև խմբային մակարդակում՝ «գողական ռոմանտիկան», «գողական եղբայրության գաղափարը», «գողական ազնվությունը» և այլն, որոնք նպաստում են քրեական խմբերի միավորմանը, որոշակի քրեական սովորույթների առաջացմանը [5, 120-123 էջեր]:

Քրեական մշակույթը կատարում է մի շարք **գործառույթներ**: Օրինակ՝ այն հանդիսանում է մինչ հանցավոր և հանցավոր վարքը կապող օղակ, կատարում է կարգավորող գործառույթ՝ քրեական համայնքի ներկայացուցիչների վարքի և փոխհարաբերությունների կարգավորում, ինչպես նաև հանդես է գալիս որպես ինքնահաստատման, պաշտպանական գործառույթ կատարող: Քրեական ենթամշակույթը միավորում է իրավախախտներին, ներկայանում որպես իրենց վարքի կարգավորիչ: Սակայն դրա գլխավոր վտանգը կայանում է նրանում, որ վերջինս աղճատում է հասարակական գիտակցությունը, վերափոխում հանցավոր փորձը, ցնցում հասարակության բարեկարգությունը, արգելակում երիտասարդների սոցիալականացման գործընթացը, ձևավորում է հասարակական կարծիք որոշակի իրավական նորմերի խախտման նպատակահարմարության մասին, ստեղծում հանցագործի դրական կերպար և հակառակը՝ օրինապահ քաղաքացիների քննադատում [8, 20 էջ]: Հիմնվելով վերջին պարբերության վրա, կարելի է ենթադրել, որ քրեական ենթամշակույթի և վերջինիս կատարած գործառույթների իրականացման

արդյունքում հետ են մղվում անձի իրավունքներն ու ազատությունները, որոնք մարդու հետ ծնվում են և կազմում են մեր արժեքային առանցքը ու դառնում են վարքի կարգավորման և միմյանց հետ փոխհարաբերությունները կառուցելու միակ սկզբունք: Հանցագործի դրական կերպար ստեղծելով, հանցագործություն կատարելը կարող է դառնալ խրախուսելի և բնականաբար վտանգ ներկայացնի հասարակության համար: Այսօր, արդեն, խոսվում այն մասին, որ քրեական ենթամշակույթի դեմ պայքարելու գործընթացը կարգավորվում է Օրենսդրական մակարդակով, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ տարբեր երկրներում: Օրինակ՝ ՀՀ Քրեական օրենսգրքում արդեն իսկ ներառված է քրեական ենթամշակույթին վերաբերող հոդված, իր ենթակետերով, որտեղ մանրամասն նշվում է քրեական ենթամշակույթի քրեականացման մասին (ՀՀ ՔՕ հոդված 223.2, 223.3, 223.4): Իսկ Ռուսաստանի Դաշնության Վճռաբեկ դատարանը АУЕ («Арестантский Уклад Един») կոչվող քրեական խմբավորումը ընդունել է որպես էքստրեմիստական, ինչի հետևանքով վերջինս արգելվել է ՌԴ տարածքում, օրենքի ուժ և կարգավորում գտնելով ՌԴ Քրեական Օրենսգրքում (ՌԴ ՔՕ հոդվածներ՝ 282.1, 282.2, 282.3):

Քրեական ենթամշակույթը կարող է անմիջականորեն կապված լինել անչափահասների և երիտասարդների խմբավորումների հետ, ովքեր ունեն քրեական ուղղվածություն և զբաղված են քրեական գործունեությամբ: Քրեական ենթամշակույթը քրեական խմբավորումների ամբողջականության, իրենց հանցավոր գործունեության արդյունավետության համար պայման է հանդիսանում: Միևնույն ժամանակ, քրեական ենթամշակույթի նորմերը և արժեքները համարվում են անչափահասների և երիտասարդների անհատական վարքի ուժեղ կարգավորիչներ, ունեն ռեֆերենտության բարձր աստիճան՝ հոգեբանական վարակման մեխանիզմի, նմանակման շնորհիվ: Այստեղ գործում են հասարակությանը և համամարդկային արժեքների և պահանջներին հակադրվող վարքային կանոններ, ավանդույթներ և արժեքներ: Անչափահասի կամ երիտասարդի ներգրավումը քրեական խումբ, կապված է դրա նորմերի, արժեքների ընդունման հետ [2, 60 էջ]: Բացի այս քրեական ենթամշակույթի մասին տեղեկությունը, արժեքները, կառուցվածքը կարող է հասանելի լինել նաև այն անչափահասների համար, ովքեր չեն գտնվում որևիցե հանցավոր խմբավորման մեջ, ԶԼՄ-ների, հեռուստատեսության և համացանցի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս մեզ ենթադրելու, որ անգամ, եթե անչափահասը հանցավոր խմբի անդամ չէ, կարող է վերցնել տվյալ արժեքները և օգտագործել դրանք իր առօրյա կյանքում, միջանձնային հարաբերությունների մեջ:

Անչափահասների շրջանում քրեական ենթամշակույթը կամ քրեական ենթամշակույթի արժեքներին հարելը կապված է իրենց իրավական գիտակցության աղճատումների (իրավական անտեղյակություն, սոցիալ-իրավական

ինֆանտիլիզմ, իրավական մշակույթի բացակայություն, սոցիալ-իրավական նիհիլիզմ, սոցիալ-իրավական ցինիզմ) հետ: Քրեական ենթամշակույթի ազդեցության տակ իրենց իրավագիտակցությունը ձևափոխվում է, նրանք ունակ են հանցագործություն կատարել, վարքում գերիշխում է շահադիտական ուղղվածությունը: Բացի այդ, նրանց հատուկ է այնպիսի բարոյական հասկացությունների աղճատում, ինչպիսիք են պարտքը, խիղճը, արժանապատվությունը, ազնվությունը, ինչպես նաև յուրաքանչյուր տեսակի զգացմունքների բթացումը [7, 234 էջ]:

Եթե դիտարկենք անչափահասների հանցավորության պատճառները, յուրահատուկ տեղ է զբաղեցնում հենց շրջապատի բացասական ազդեցությունը: Այն համարվում է առավել նշանակալի կապված բացասական վարքով անչափահասների հակահիրավական խմբերի մեջ ներգրավման ուժեղ ձգտման հետ: Հայտնվելով այդ խմբերում նրանք ձգտում են նմանվել լիդերներին, թե տեսքով, թե վարքով [3, 240 էջ]: Անչափահաս հանցագործը ունի հակաօրինական վարքի կայուն կարծրատիպեր, հակումներ, սովորույթներ և հետևում է հատուկ «գողական» կանոններին և ավանդույթներին [4, 291 էջ]:

Հասկանալու համար մերօրյա հայաստանյան հասարակության մեջ, հատկապես անչափահասների շրջանում քրեական ենթամշակույթի տարրերի դրսևորումները մենք անցկացրել ենք հետազոտություն, որն ուղղված է ուսումնասիրելու քրեական ենթամշակույթի նորմերի և արժեքների ազդեցությունն անչափահասների միջանձնային հարաբերությունների վրա:

Ուսումնասիրությունն իրականացվել է օգտագործելով որակական մեթոդներ:

Իրականացվել են հարցումներ, անչափահասների գործերով զբաղվող ոստիկանների, ինչպես նաև նախկին զինծառայողների և ծառայության պատրաստվող պատանիների հետ: Նախկին զինծառայողներ և ծառայության պատրաստվող պատանիների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ փակ պայմաններում միջանձնային հարաբերությունների կարգավորումները հիերարխիկ են, կարող են լինել ավելի սթրեսային, անձից պահանջում են այլ որակներ, ինչը կարող է հանգեցնել նաև այլ ոչ դրական միջամտությունների: Յուրաքանչյուր հետազոտական խմբի համար կազմվել են համապատասխան հարցաթերթեր, որոնց մեջ նշված են հարցումների հիմնական թեմաները: Անչափահասների գործերով զբաղվող ոստիկանների հետ հարցումները անցկացվել են հետևյալ թեմաներով՝

- անչափահասների հանցավորության վիճակը,
- անչափահասների վերաբերմունքը ոստիկանների նկատմամբ,
- հանցագործության կատարման սեռային առանձնահատկությունները,
- սոցիալական ինստիտուտների, ՀԼՄ-ների, համացանցի ազդեցությունն անչափահասների միջանձնային հարաբերությունների վրա,

- առավել տարածված հանցագործությունները և դրանց կատարման դրդապատճառները,
- անչափահասների հիմնական հետաքրքրությունները,
- «գողական աշխարհով» հետաքրքրվածությունը,
- անչափահասների ներգրավվածությունը հանցավոր խմբերի մեջ:

Նախկին զինծառայողների հետ հարցում անցկացնելիս առավել շատ անդրադարձել ենք հետևյալ թեմաների քննարկմանը՝

- զինվորների միջանձնային հարաբերություններ,
- բանակում չգրված օրենքների/կանոնների, վարքային նորմերի առկայություն,
- «նորեկների ընդունման» առանձնահատկությունները,
- բանակի նախապատրաստման առանձնահատկությունները:
- Եվ վերջապես ծառայության պատրաստվող անձանց հետ քննարկվել են հետևյալ թեմաները՝
- նախնական պատրաստության անհրաժեշտությունը,
- ընդունելի վարքը բանակում,
- անընդունելի վարքը բանակում,
- վարքային նորմերի առանձնահատկություններ (ինչից խուսափել, ինչպես հարգանք ձեռք բերել և այլն):

Հարցումներից բացի իրականացվել են նաև քննարկումներ հիմնական և ավագ դպրոցներում, անչափահասների շրջանում (9-րդ և 12-րդ դասարանների աշակերտների հետ): Յուրաքանչյուր քննարկմանը մասնակցել է 10 աշակերտ: Հաշվի առնելով թեմաների առանձնահատկությունները, նպատակահարմար ենք գտել քննարկումները իրականացնել՝ առանձնացնելով աշակերտներին ըստ սեռի և տարիքի: Անչափահասների հետ քննարկվել են հետևյալ թեմաները՝

- միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններ.
- ընդունելի/անընդունելի, լավ/վատ, ճիշտ/սխալ վարքային դրսևորումներ,
- չգրված օրենքների, կանոնների առկայություն,
- սիրելի ֆիլմեր (մասնավորապես, քրեական տարրերով ֆիլմերի քննարկում)
- քրեական հեղինակությունների մասին տեղյակության աստիճան,
- «լավ» տղայի կերպար:

Որակական մյուս մեթոդը, որն օգտագործվել է հետազոտությունն իրականացնելիս, փորձագիտական հարցումներն են: Դրանք անցկացվել են հոգեբանի, մշակութաբանի, իրավաբանի և մանկավարժի հետ: Փորձագիտական հարցումներն իրականացնելիս քննարկվել են հետևյալ թեմաները՝

քրեական ենթամշակույթի առկայությունը հայ հասարակությունում,

- անչափահասների միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները և դրանցում քրեական ենթամշակույթի տարրերի առկայությունը,
- անչափահասների հետաքրքրությունները,
- հայ հասարակության մեջ հակահիրավական վարքագծի առավել ընդունելի լինելը, ինչպես նաև դրա աղբյուրները,
- հայկական դաստիարակության առանձնահատկությունները,
- փակ կամ/և կիսափակ հաստատություններում քրեական ենթամշակույթի դրսևորումների առկայության մասին:

Եվ այսպես, անդրադառնալով հետազոտության արդյունքներին, նշենք որ ոստիկանների հետ հարցումների վերլուծությունը ցույց տվեց, որ անչափահասները մասամբ կարող են դրսևորել քրեական ենթամշակույթին բնորոշ վարքագիծ, սակայն խմբային մակարդակում, այն է՝ խմբում ցույց տալ սեփական բացասական վերաբերմունքը ոստիկանության աշխատակցի նկատմամբ, մինչդեռ անհատական մակարդակում դա այդպես չէ: Բացի այդ հեռուստատեսությունն իր բացասական ազդեցության շնորհիվ խրախուսում է հակահիրավական վարքագիծը, ինչն էլ հիմք է հանդիսանում միջանձնային հարաբերություններում նման վարքագծի դրսևորմանը:

Ամփոփելով նախկին զինծառայողների հետ կատարված հարցումները, նշենք, թե ծառայության ընթացքում զինվորների միջև հարաբերությունների ինչ առանձնահատկություններ դուրս բերեցին հարցվողները: Հետաքրքրական էր այն, որ նախկին զինծառայողները նշում էին, որ ներկայիս բանակային հարաբերությունները միտված չեն «թույլին ճնշելու» սկզբունքի վրա, ինչն ավելի բնութագրական էր 90-ականների բանակին: Սակայն առանձնացրին բանակում «նորեկների ընդունման» մասին, ինչն իրենից ներկայացնում է նոր եկած զինվորների ճանաչումը, նրանց հետ որոշակի «կատակներ» անելը, նրանց «փորձելը», «քննության» ենթարկելը: Բացի այդ բանակում ընդունված է իրար մականուններով դիմելը:

Ծառայության պատրաստվող պատանիների հետ հարցման ժամանակ քննարկման հարցվողների մեծամասնությունը բանակ գնալուն վերաբերվում էին դրական: Վարքային նորմերի մասին խոսելիս, հարցվողները կրկին անգամ նշեցին իրենց ավելի հանգիստ պահելու մասին, ինչպես նաև բոլորի կողմից շատ կարևորվում էր թույլին պաշտպանելու միտումը, որը համարվում էր հարգանք ձեռք բերելու միջոցներից մեկը: Անգամ նորեկների ընդունման մասին խոսք չգնաց: Այսինքն, եթե ամփոփենք նախկին զինծառայողների և ապագա զինծառայողների տված պատասխանները, կարող ենք ենթադրել, որ տևական ժամանակահատվածի ընթացքում բանակային հարաբերությունները փոխվում են դեպի ավելի դրականը, նախկինում թույլին ճնշելու միտումը փոխարինվում է թույլին պաշտպանելու միտմամբ և հետևաբար

բանակում միջանձնային հարաբերություններում հումանիստական արժեքների գերակայմամբ:

Անչափահասների հետ քննարկումները բաժանված են եղել ըստ տարիքի և սեռի: Մենք առանձնացրել ենք 9-րդ և 12-րդ դասարանի տղաների և աղջիկների խմբերը, քանի որ 9-րդ և 12-րդ դասարաններում տարիքային տարբեր շրջաններում են գտնվում անչափահասները: Անդրադառնանք 9-րդ և 12-րդ դասարանների տղաների քննարկումների արդյունքներին: Այստեղ տղաների համար համընդհանուր էր «լավ տղա» հասկացությունը, ով առանձնանում է այնպիսի հատկություններով, ինչպիսիք են՝ ընկերներին մշտապես աջակցող, սիրելի աղջկա կամ քրոջը պաշտպանող, նրանց համար հարցեր պարզող: Ինչ վերաբերվում է չգրված օրենքներին, այստեղ տղաները ավելի շատ նշում էին ուրիշներին չվիրավորելը, սեփական հարցերը ինքնուրույն լուծելը, առանց դասղեկին տեղեկացնելու, չխաբելը, չնվաստացնելը, ինչի պահպանումն էլ որոշում է պահելածևի «տեսակը»՝ ճիշտ կամ սխալ: Ի դեպ «լավ տղա» լինելը թե 9-րդ, թե 12-րդ դասարանների աշակերտների մեծամասնության համար դիտարկվում է որպես դրական: Քրեական տարրերով ֆիլմերի մասին 9-րդ դասարանի տղաների պատկերացումները տարբերվում էին 12-րդ դասարանի տղաների պատկերացումներից: Մասնավորապես՝ 9-րդ դասարանի տղաների շրջանում նշվեց, որ այդ ֆիլմի գլխավոր հերոսի կերպարը նրանց այնքան է դուր գալիս, որ կուզեին նմանվել նրան, հենց այն բանի համար, որ նա իր շրջապատին հասնող է և ճիշտ իր էությամբ, պատրաստ է անել ամեն քայլ ընկերների, հարազատների համար: Եթե 9-րդ դասարանի աշակերտները գերադասում էին նմանվել ֆիլմի հերոսին, ապա 12-րդ դասարանի պատանիները հերքեցին այդ ցանկությունը, նշելով ֆիլմի գաղափարի և իմաստի մասին, ինչի մասին անգամ չգիտեին 9-րդ դասարանի տղաները: Այսինքն, այստեղ տեսնում ենք պատանիների ավելի գիտակցված և իրատեսական վերաբերմունք նման ֆիլմերին, որտեղ հերոսին նմանվելու ցանկություն չկա, սակայն օրինակ ընկերության մասին գաղափարները դուր են գալիս նրանց այն չափով, որ ընկերոջը պետք է աջակցել, սակայն հակահիրավական կամ հակասոցիալական քայլերի գնալ չի կարելի: Կարելի է ենթադրել, որ այս տարիքում արդեն պատանիների մոտ ավելի է զարգանում իրավագիտակցությունը և օրենքի նկատմամբ հարգանքը: Սա ևս մեկ անգամ կարող է ապացույց լինել այն բանի, որ քրեական տարրերով ֆիլմերը դեռահասի կողմից թերի են ընկալվում, որտեղ կա նաև ձգտում գլխավոր հերոսի կերպարին նմանվելու, հետևաբար կարող է վերջինիս արժեքների յուրացվի դեռահասի կողմից:

Աղջիկների հետ քննարկումները էականապես տարբերվում էին տղաների քննարկումներից: Նշենք հիմնական առանձնահատկությունները: Աղջիկների միջանձնային հարաբերություններում չկան, որոշակի կանոնները ու չգրված օրենքներ: 9-րդ և 12-րդ դասարանի աղջիկների ընկերության վերա-

բերյալ կարծիքների միակ տարբերությունը կայանում էր նրանում, որ եթե 9-րդ դասարանի աղջիկները ընկերության համար հակահիրավական քայլի չէին գնա, ապա 12-րդ դասարանի աղջիկները հակառակը, ոգևորությամբ նշեցին այն մասին, որ ընկերության համար կգնային այդ քայլին (մարմնական վնասվածք, ծեծ): Քրեական աշխարհի նկատմամբ վերաբերմունքը աղջիկների մոտ բացասական է:

Ընդհանուր առմամբ հետաքրքիր հակասություն է նկատվում: Մի կողմից առկա են քրեական մշակույթին բնորոշ առանձնահատկություններ անչափահասների վարքում, մյուս կողմից դրանք քրեական ուղղվածության չեն: Փորձագիտական հարցումների արդյունքները թույլ են տալիս հաստատել նախորդ նախադասության միտքը: Ըստ փորձագետների, մասնավորապես տղաները, միջանձնային հարաբերություններում ավելի շատ օգտագործում են քրեական մշակույթի միայն այն տարրերը, որոնք իրենցից չեն ենթադրում հանցավոր արարք, սակայն անբարենպաստ գործոնների առկայության դեպքում դրանք կարող են վերածվել քրեորեն պատժելի արարքի: Փորձագետները շեշտը դրեցին այն հանգամանքի վրա, որ քրեական ենթամշակույթը ոչ ամբողջությամբ է համարվում «քրեական», այն առումով, որ իր մեջ ներառում է նաև բարոյական, դրական արժեքներ, որոնք ներքնայնացվում են անչափահասների կողմից: Մասնավորապես այդ արժեքների մեջ է մտնում աղջկա համար հարցեր պարզելը, աղջկա ներկայությամբ հայհոյանք չօգտագործելը, ընկերներին հասնելը ամեն պահին: Սրանք էլ ըստ փորձագետների ինչ-որ չափանիշներ են, որոնցով անչափահասները իրենց համարում են «լավ», «ճիշտ» տղաներ: Անգամ նշելով, որ քրեական մշակույթի տարրերը անուղղակի կերպով փոխանցվում են ԶԼՄ-ների, համացանցի, հեռուստատեսության կողմից և ինչ-որ տեղ խրախուսական են համարվում հասարակության կողմից:

Այսպիսով, մեր կատարված հետազոտությունը թույլ է տալիս մեզ եզրակացնելու, որ անչափահասներն իրենց միջանձնային հարաբերություններում կարող են օգտագործել քրեական մշակույթին բնորոշ այն տարրերը, որոնք չեն ենթադրում քրեածին վարք: Անգամ այդ տարրերն առավել արտահայտված կարող են դրսևորվել անչափահասների մոտ խմբային մակարդակում, այլ ոչ թե անհատական:

Իհարկե չպետք է մոռանալ, ԶԼՄ-ների, համացանցի, հեռուստատեսության և մի շարք այլ գործոնների ազդեցության մասին, որոնք կարող են քրեական մշակույթի բացասական տարրերի փոխանցողը լինել: Այս ամենը հիմք է հանդիսանում նշված ոլորտում նոր հետազոտությունների անցկացման անհրաժեշտությանը, ինչը առաջ է քաշում նոր նպատակներ և խնդիրներ:

Գրականություն

1. **Аминов И. И.** «Юридическая психология»-М, 2012, 412 с.
2. **Бабаев Т. М., Каргина Н. В.** «Юридическая психология: Учебное пособие для студентов, обучающихся по специальности «Психология» »– М., 2016. – 127 с.
3. **Коробейников Б. В., Кузнецова Н. Ф., Миньковский Г.М.** «Криминология» -М., 1988-384 с.
4. **Кудрявцев В. Н., Эминов В.Е.** «Криминология»-М., 1997-512 с.
5. **Пирожков В. Ф.** «Криминальная психология»- М., 2007-704 с.
6. **Ребер А.** «Оксфордский толковый словарь по психологии» . — М., 2002 [электронный ресурс] https://vocabulary.ru/termin/subkultura.html
7. **Сапогов В. М.** «Проблемы преодоления деформации правосознания и профилактики противоправного поведения несовершеннолетних в условиях изоляции от общества // Борьба с преступностью: теория и практика: тезисы докладов IV Международной научно-практической конференции» 2016. –233-238с.
8. **Старков О. В.** «Криминальная субкультура: спецкурс»-М., 2010-240 с.
9. **Столяренко А. М.** «Прикладная юридическая психология»-М., 2001-473с.

НЕГАТИВНОЕ ВЛИЯНИЕ КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРЫ НА ФОРМИРОВАНИЕ ЛИЧНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

Хачатрян Л. А. (Поликлиника полиции РА, Ереван, Армения)

Статья посвящена изучению психологических особенностей криминальной культуры. Говоря о криминальной культуре, необходимо сказать, что для ее формирования существовали исторические, культурные, общественные, социальные проявления, а также правовые условия, которые в результате государственной структуры, государственной деятельности или бездействия способствовали существованию этой культуры, которая на долгие годы стала частью общественной жизни. С точки зрения воздействия на человека, конечно, она быстрее усваивается, особенно несовершеннолетними, в силу возрастных особенностей последних. Агрессия, насилие на телевидении, успехи тех, кто демонстрирует определенное преступное поведение и истории, пропогандирующие романтических героев-пустышек, воспринимаются несовершеннолетними как положительные, а их неограниченный доступ к Интернету позволяет несовершеннолетним получать обширную информацию об особенностях преступной культуры. В статье проводится теоретический анализ криминальной культуры с точки зрения психологического воздействия. Также представлены результаты исследования, направленного на изучение

негативного воздействия криминальной культуры на несовершеннолетних. Результаты исследования позволяют сделать вывод о том, что подростки склонны применять определенные ценности криминальной субкультуры в своих межличностных отношениях - нормы как форму поведения, как средство регулирования отношений. Это особенно актуально, когда речь идет о дружбе с представителями мужского пола, а также при построении отношений с противоположным полом.

Ключевые слова. *Криминальная субкультура, несовершеннолетние, противоправное поведение, криминальная общность, элементы криминальной субкультуры, правосознание.*

NEGATIVE IMPACTS OF CRIMINAL SUBCULTURE ON THE FORMATION OF THE PERSONALITY OF JUVENILES

Khachatryan L. A. (Police Polyclinic of RA, Yerevan, Armenia)

The next article is devoted to the study of the psychological characteristics of criminal culture. Speaking about criminal culture, it must be said that for its formation there were historical, cultural, social, manifestations, as well as legal conditions that, as a result of the state structure, state activity or inaction, contributed to the existence of this culture, which for many years became a part of public life. From the point of view of the impact on a person, of course, it is assimilated faster, especially by juveniles, due to the age characteristics of the latter. Aggression, violence on television, the successes of those who demonstrate certain criminal behavior and stories promoting romantic dummy heroes are perceived by juveniles as positive, and their unlimited access to the Internet allows juveniles to receive extensive information about the peculiarities of criminal culture. The article provides a theoretical analysis of criminal culture from the point of view of psychological impact. Also presented are the results of a study aimed at studying the negative impact of criminal culture on juveniles. The results of the study allow us to conclude that juveniles tend to apply certain values of the criminal subculture in their interpersonal relationships - norms as a form of behavior, as a means of regulating relationships. This is especially true when it comes to friendship with males, as well as when building relationships with the opposite sex.

Keywords. *Criminal subculture, juveniles, illegal behavior, criminal community, elements of the criminal subculture, lawfulness.*